



«ԵՐԵՎԱՆԻ ՄԻԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ



ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ


Հայաստան, 0025, Երևան, Կորյունի փ. 2, հեռ. 060621238, 2-38, ss@ysmu.am

«ԵՐԵՎԱՆԻ ՄԻԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի ԹԻՎ 6
ՆԻՍՏՈՒՄ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևանի Միիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) կանոնադրության 55-րդ կետը՝ «Երևանի Միիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի գիտական խորհուրդը, լսելով և քննարկելով կլինիկական աշխատանքների գծով պրոռեկտոր, պրոֆեսոր Ա.Մ.Մինասյանի՝ «Համալսարանական հիվանդանոցների 2017թ. գործունեության հաշվետվությունը» թեմայով զեկուցումը, ինչպես նաև այլ զեկույցներ և ելույթներ

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համալսարանի կլինիկական աշխատանքները գնահատել բավարար (18-05-06-01):
2. Հավանություն տալ Համալսարանի հիվանդանոցային համալիրներում գործողությունների ստանդարտ ընթացակարգերի ներդրման, բժշկական ժամանակակից սարքավորումներով վերազինման, ինչպես նաև համալիրների ոչ բարեկարգ հատվածների վերանորոգման աշխատանքներին (18-05-06-02):
3. Առաջարկել «Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» ՓԲԸ-ի տնօրենին՝ համալսարանի կլինիկական աշխատանքների կազմակերպման վարչության հետ մինչև 2018 թվականի հոկտեմբեր ամիսը համատեղ մշակել և ներկայացնել «Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» ՓԲԸ-ի զարգացման եռամյա ծրագիրը (18-05-06-03):
4. Մինչև 2020 թվականը ստեղծել պայլատիվ բժշկական օգնության և սպասարկման ծառայություն՝ համալսարանական հիվանդանոցային համալիրների կազմում (18-05- 06-04):
5. Մինչև 2020 թվականը ստեղծել Համալսարանի կառուցվածքում ԵՊԲՀ Հեռաբժշկության Կենտրոն (18-05-06-05):
6. Հավանություն տալ «Երևանի Միիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամում ռեկտորի կրթաթոշակ սահմանելու և այդ կրթաթոշակի տրամադրման կարգը հաստատելու մասին» հոգաբարձուների խորհրդի որոշման նախագծին (18-05-06-06):



7. Հաստատել՝

1) «Բուժհաստատությունների կառավարում» վերապատրաստման դասընթացի կրթական ծրագիրը և պլանը (18-05-06-07)


2) Համալսարանի գիտական խորհրդի 2013 հունիսի 3-ի թիվ 11 որոշմամբ հաստատված «Անվանական կրթաթոշակների սահմանման և շնորհման մասին կանոնակարգ»-ի, 2013 հունիսի 3-ի թիվ 11 որոշմամբ հաստատված «Ամբիոնների և դասախոսական կազմի մասին կանոնակարգ»-ի, 2015 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 3 որոշմամբ հաստատված «Ամփոփիչ ատեստավորման կանոնակարգ»-ի փոփոխությունները և լրացումները (18-05-06-08):

8. Բրիտանահայ ականավոր վիրաբույժ, լապարասկոպիկ վիրաբուժության առաջամարտիկ, Մեծ Բրիտանիայի առողջապահության նախկին նախարար Արա Դարգիին շնորհել ԵՊԲՀ պատվավոր դոկտորի կոչում (18-05-06-09):

9. Որոշումների կատարման հսկողությունը հանձնարարել ռեկտոր պրոֆեսոր Ա.Ա.Մուրադյանին:

Ռեկտոր՝

Գիտքարտուղար՝



բ.գ.դ., պրոֆ. Ա. Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

բ.գ.դ., պրոֆ. Տ.Գ.ԱՎԱԳՅԱՆ

